

Արյան պարազիտային հիվանդությունն՝ պիրոպլազմոզ (ժողովրդական անվանումը՝ ջերմ)

Հիվանդության բնորոշումը. Պիրոպլազմոզները սուր ընթացք ունեցող տրանսմիսիվ հիվանդություններ են (տզերի միջոցով փոխանցվող), որոնց բնորոշ են կայուն տենդը, սակավարյունությունը, տեսանելի լորձաթաղանթների դեղնությունը, հեմոգլոբինամիզությունը (մեզի մեջ արյուն) և օրգանիզմի այլ կենսաբանական նշանակություն ունեցող ֆունկցիաների խանգարումները:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հարուցիչ ձևաբանությունը. Բոլոր պիրոպլազմոզները տեղակայվում են էրիտրոցիտներում: Տավարի պիրոպլազմոզի հարուցիչն է *Piroplasma bigemina*: Հայաստանում տարածված է Սյունիքի, Լոռվա և Տավուշի մարզերում: Հիվանդությունը փոխանցում են արոտավայրային տզերը: Հիվանդությունը խիստ ծանր են տանում հյուծված կենդանիները: Մատղաշները համեմատաբար սակավ են հիվանդանում և նրանց մոտ ընթանում է թեթև ձևով:

Տեղական տավարը յուրաքանչյուր տարի հարուցիչներով վարակվելու հետևանքով հիվանդությունը տանում է թեթև, առանց բնորոշ նշանների (օրինակ կարող է վարակված լինի ամբողջ գլխաքանակը, սակայն հիվանդությունը ծանր արտահայտվի միայն որոշ կենդանիների մոտ): Պիրոպլազմոզով հիվանդանում են նաև մարդիկ:

Կլինիկական նշանները. Տավարի մոտ հիվանդության գաղտնի շրջանի տևողությունը 70 օր է: Հիվանդությունը սկսվում է մարմնի ընդհանուր ջերմաստիճանի կտրուկ բարձրացումով: 40-80%-ով ընկնում է կաթնատվությունը, կաթը դառնում է դեղին, երբեմն էլ կարմիր գունավորմամբ և դառը համով: Այնուհետև ի հայտ է գալիս սակավարյունություն, իսկ հետագայում նաև դեղնախտի նշաններ: Ընկճվում է ախորժակը և շնչառությունը, պուլսը արագացած է: Բնորոշ նշաններից է ընդմիջվող փորլուծը, փորկապությունը, հաճախամիզությունը: Հնարավոր է, որ հիվանդության 3-րդ կամ 4-րդ օրը պիրոպլազմոզից առաջանան կենդանիների մասսայական անկումներ:

Կանխարգելումը. Տզերի՝ կենդանիների վրա հարձակման շրջանում (հիմնականում արոտային շրջանում), կենդանիներին պարբերաբար մշակում են տգասպան միջոցներով: Պիրոպլազմոզով հիվանդ կենդանիներին առանձնացնում են, ապահովում են դյուրամարս կերերով և թարմ ջրով, միկրոտարբերով և վիտամիններով:

Յուրահատուկ դեղամիջոցներից նշանակում են.

1. Ազիդին (բերենիլի) 7% լուծույթ՝ ենթամաշկ կամ ներմկան, 0.0035 գ/կգ դեղաչափով:
2. 1% Տրիպան կապույտ՝ ներերակ, 5 մգ/կգ դեղաչափով, 1-2 անգամ, 24 ժամ ընդմիջումով:
3. 5% Պիրոպլազմին՝ ենթամաշկ, 1 մգ/կգ դեղաչափով, 1-2 անգամ, 24 ժամ ընդմիջումով:
4. Դիամիդինի 7% լուծույթ՝ ենթամաշկ կամ ներմկան, 0.001-0.002 գ/կգ դեղաչափով:

Օգտագործում են նաև պիրոցիդ, ֆատրիբանիլ, հեմոսպորիդին, նագանին և այլ դեղամիջոցներ: Հիվանդության հայտնաբերման դեպքում անհապաղ դիմել անասնաբույժին, հետագայում վարակի տարածումից զերծ մնալու և ճիշտ բուժում իրականացնելու համար: